ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

/2016թ. ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի ուղղությամբ ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից իրականացված աշխատանքների մասին/

1. ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ և 132.2-րդ հոդվածներ՝ «Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը» և «Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը»

2016թ. ընթացքում վարույթ է իրականացվել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հատկանիշներով **19** քրեական գործերով, որոնցից **5-ը**՝ նախկինում հարուցված և 2016թ. փոխանցված գործեր են, **2-ը՝** նախկինում հարուցված և 2016թ. վերսկսված գործեր են, իսկ **12-ը**՝ հարուցվել են 2016թ.: Նշված քրեական գործերից **2-ը** վերաորակվել են ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխանաբար 262-րդ և 168-րդ հոդվածներով:

2016թ. բացահայտվել են մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հանցագործության **10** դեպքեր, որոնցից **3-ը**՝ վերաբերել են կանանց պոռնկության շահագործմանը, **6**-ը՝ ՌԴ-ում աշխատանքային շահագործմանը, իսկ **1-ը**՝ Թուրքիայում աշխատանքային շահագործման և սեռական շահագործման փորձին: Պոռնկության շահագործման **3** դեպքերից **1**-ը ներքին սեռական շահագործման դեպք է, իսկ **2**-ի շահագործումն իրականացվել է ԱՄԷ Դուբայ քաղաքում:

Նշված քրեական գործերով հայտնաբերվել և տուժող է ճանաչվել **22** զոհ, որոնցից **3**-ը՝ կանայք:

Բոլոր տուժողները տվել են իրենց համաձայնությունը և հետագա աջակցություն ստանալու նպատակով ուղղորդվել են «Ամքոր Հայաստան» ու «Հույս և օգնություն» ՀԿ-ներ:

2016թ. ընթացքում մեղադրանք է առաջադրվել 2 անձի:

01.01.2016թ. դրությամբ հետախուզման մեջ են գտնվել 19 անձինք, 2016թ. ընթացքում հետախուզման մեջ գտնվող անձ չի հայտնաբերվել, 3 անձի նկատմամբ հայտարարվել է միջազգային հետախուզում:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդված՝ «Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը»

2016թ. ընթացքում բացահայտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի հատկանիշներով հանցագործության 1 դեպք:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ և 262-րդ հոդվածներ՝ «Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը» և «Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը»

2016թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ և 262-րդ հոդվածների հատկանիշներով բացահայտվել են հանցագործության 21 դեպքեր:

Բացի այդ, 2016թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից իրականացվել են նաև թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

ՀՀ տարածքում ՀԱՊԿ ձևաչափով կազմակերպվել և անցկացվել է երրորդ երկրների քաղաքացիների ապօրինի միգրացիայի և մարդկանց առևտրի հակազդման ուղղությամբ օպերատիվ-կանխարգելիչ և հատուկ օպերացիաներ՝ «Նելեգալ-2016» անվանմամբ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ոստիկանության ծառայողների տարբեր խմբերի՝ ընդհանուր առմամբ շուրջ 83 ծառայողների համար կազմակերպվել են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման խնդիրներին վերաբերող դասընթացներ:

Ի կատարումն ՀՀ վարչապետի 29.10.2015թ. թիվ 1356-Ն որոշման, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերի, զոհերի, հատուկ կատեգորիայի

զոհերի և նրանց օրինական ներկայացուցիչների պաշտպանությունն իրականացնող ՀՀ ոստիկանության պատասխանատու ստորաբաժանում ՀՀ ոստիկանության պետի 29.06.2016թ. թիվ 1720-Ա հրամանով սահմանվել է ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը:

Անչափահաս ազգաբնակչությանը կրոնական հոսանքների հետևորդների կողմից հիշյալ շարժումների մեջ ներգրավելու գայթակղությունից զերց պահելու, ինչպես նաև անչափահասների կողմից և նրանց նկատմամբ կատարվող հանցագործություններն ու այլ իրավախախտումները նախականխելու, վերջիններիս շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնելու նպատակով ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողների ուժերով, սպասարկվող վարչական տարածքներում գործող դպրոցներում կազմակերպվել և անց են կացվել հանդիպումներ, զրույցներ, որոնց ընթացքում անչափահասներին բացատրվել է շահագործման (թրաֆիքինգի) զոհ դառնալու հնարավորությունները և դրանց վտանգավորությունը:

Անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության դեպքերը նախականխելու, վերջիններիս մուրացկանության մեջ ներգրավող անձանց հայտնաբերելու /անչափահասների թրաֆիքինգի և շահագործման ենթարկելու ռիսկի նվազեցման/, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի 03.02.2016թ. թիվ 1-Ց ցուցումի պահանջների համաձայն 2016թ. կազմակերպվել և անց են կացվել լայնածավալ միջոցառումներ, որոնց ընթացքում անչափահասների հետ տարվել են կանխարգելիչ աշխատանքներ:

2016թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունում հանդիպումներ են կայացել ԵԱՀԿ թրաֆիքինգի դեմ պայքարը համակարգող հատուկ ներկայացուցիչ Մադինա Ժաբուրդինովայի, Միգրացիայի և զարգացման միջազգային ծրագրի փորձագետ Էլիզա Մոսլեռ Վիդալի, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության իրավապահ հարցերով նորանշանակ խորհրդատու Աբի Հոլովեյի հետ, որոնց հետ, ի թիվս միջազգային հանցավորության դեմ պայքարին ուղղված այլ հարցերի, քննարկվել են նաև ՀՀ-ում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարն ու այդ ոլորտում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները:

Շարունակվել են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեպքերի, ինչպես նաև նշված հանցագործությունները կատարելու մեղադրանքով միջազգային հետախուզման մեջ գտնվող անձանց վերաբերյալ ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի միջոցով Թուրքիայի, ԱՄԷ-ի, Վրաստանի և ՌԴ իրավապահ մարմինների հետ համագործակցությունը: Բացի այդ, մի շարք հարցումներ են ուղարկվել նաև ՀՀ քաղաքացիներին Ռուսաստանի Դաշնությունում աշխատանքային շահագործման ենթարկելու կապակցությամբ նախապատրաստվող նյութերի շրջանակներում:

Ոստիկանության աշխատակիցներն ակտիվ մասնակցություն են ունեցել տեղական և միջազգային խորհրդաժողովներին, սեմինարներին և հանդիպումներին:

Հասարակության իրազեկումը բարձրացնելու նպատակով «police.am» կայքէջում առանձին հղումով ստեղծված թրաֆիքինգին վերաբերող հավելվածում շարունակվել է թրաֆիքինգի վերաբերյալ համապատասխան նյութերի տեղադրումը:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՀԴՊ ԳՎ

3-ՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԲԱԺԻՆ